

**«Հարկային հաշվարկները հարկային մարմին
թղթային եղանակով ներկայացնելու դեպքերը
սահմանելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման
նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

..... 2017 թվականի N - Ն

**ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ
ՆԵՐԿԱՅԱԾՆԵԼՈՒ ԴԵՊԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել՝ հարկային հաշվարկները հարկային մարմին թղթային եղանակով ներկայացնելու դեպքերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2017թվականի

_____ -ի _____ -ի N _____ -Ն որոշման

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱԾՎԱՐԿՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱԾՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են հարկային հաշվարկները հարկային մարմին թղթային եղանակով ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:
2. Հարկային հաշվարկները, բացառությամբ եկամտային հարկի հաշվարկի, հարկային մարմին թղթային եղանակով կարող են ներկայացվել հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքում:
3. Հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքում եկամտային հարկի հաշվարկը ներկայացվում է ծրագրային համակարգի խափանումն ավարտվելուց հետո՝ Էլեկտրոնային եղանակով:
4. Հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման փաստը թղթային եղանակով հարկային հաշվարկներն ընդունող աշխատակցի կողմից ստուգվում է հարկային մարմնի պաշտոնական կայքում (taxservice.am) հրապարակված տեղեկատվության հիման վրա, որտեղ նշվում է խափանման ժամկետի սկիզբը և ավարտը:
5. Հարկ վճարողները թղթային եղանակով հարկային հաշվարկները հարկային մարմին ներկայացնում են փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով կամ առձեռն:
6. Հարկային մարմին թղթային եղանակով ներկայացված հարկային հաշվարկները կազմվում են հարկային մարմնի սահմանված ձևերին և լրացման կարգին համապատասխան: